ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 112-Ա

<<26>> սեպտեմբերի 2024 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 77-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթով, հիմք ընդունելով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության 2024 թվականի սեպտեմբերի 18-ի AC-337-24 գրությունը, համաձայն որի՝ «Վերականգնող էներգիայի և էներգոադյունավետության խթանում Շիրակի մարզի համայնքներում» միջոցառման շրջանակում էներգաարդյուևավետության և վերականգնող էներգիայի փոքրածավալ միջոցառումների շրջանակներում Անի համայնքի Լանջիկի բնակավայրի համայնքային կենտրոնի և Սառնաղբյուրի մանկապարտեզի շենքի վրա արևային ֆոտովոլտային կայանների տեղադրման ծրագրից բացի, ծրագրում է ընդրկվել նաև Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առեվտրային կազմակերպության շենքի վրա 5.5 կՎտ հզորության ֆետովոլտային համակարգի տեղադրումը, որի արդյունքում ծրագրի արժեքը կազմել 9,365,000 ՀՀ դրամ, որից <<Հայկական Կարիտաս>> բարեսիրական հասարակական կազմակերպության ներդրումը կազմում է 7,492,000 ՀՀ դրամ, իսկ համայնքի ներդրումը՝ 1,873,000 ՀՀ դրամ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 30-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից անի համայնքի լանջիկ բնակավայրի համայնքային կենտրոնի եվ սառնաղբյուրի մանկապարտեզի շենքի տանիքներին <<Վերականգնվող էներգիայի և էներգոարդյունավետության խթանում Շիրակի մարզի համայնքներում» միջոցառման շրջանակում էներգոարդյունավետության և վերականգնող էներգիայի փոքրածավալ

միջոցառումների շրջանակներեում արևային ֆոտովոլտային կայանների տեղադրման ծրագրի իրականացմանը համաձայնություն տալու և համայնքից պահանջվող ներդրումն ապահովելու մասին>> N 77-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման 1-ին կետում նշված <<Սառնաղբյուրի մանկապարտեզի շենքի>> բառերից հետո ավելացնել <<Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզի շենքի>> բառերը:

2) Որոշման 2-րդ կետում նշված <<1,576,000 /մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար/>> թիվն ու բառերը փոխարինել <<1,873, 000 /մեկ միլիոն ութ հարյուր յոթանասուներեք հազար/>> թվով և բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ՝ 11	դեմ՝ 0	ձեռնպահ՝ 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ			
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ			
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ			
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ			
Ա. ՇԱԲՈՅԱՆ			
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ			
Ժ. ԱԼԵՔՅԱՆ			
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ			
Ն. ՍԱՐՈՅԱՆ			
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ			
Մ. ԵՆՈՔՅԱՆ			
Մ. ԱՍԼԱՆՅԱՆ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<26>> սեպտեմբերի 2024 թ.
քաղաք Մարալիկ